

## ԿԱՐՕՒՔ

### Աննա Անդրանիկի Մելքոնյանի՝

«Կանխենթադրույթը ֆրանսալեզու լրագրային խոսույթում» թեմայով

Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից քաղաքակրթության սրընթաց փոփոխությունների համատեքստում, մեծ է տեղեկատվության դերը հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Եվ անկասկած, այսօր զանգվածային լրատվամիջոցների համակարգի զարգացումը, տեղեկատվական նոր ձևերի ու եղանակների ներդրումը նպաստում են մեդիահաղորդակցության կատարելագործմանն ու նրա գործառույթների ընդլայնմանը՝ հանրային իրազեկումն ապահովելու և հասարակական կարծիքի ձևավորմանը նպաստելու նպատակով: Այս առումով, Աննա Մելքոնյանի ատենախոսության թեման արդիական է, և համաձայն ենք ատենախոսի այն մտքի հետ, որ մեդիատեղեկատվության հիմքում ընկած փաստերի համարժեք մեկնությունը պահանջում է լեզվաբանական, նշանագիտական, իմաստաբանական և գործաբանական համապարփակ և համակողմանի վերլուծություն, որը թույլ է տալիս վեհանել ոչ միայն ներկայացված փաստերի տրամաբանական հիմնավորումները, այլ մեդիախոսույթի կանխենթադրույթը՝ ներակա խորքային իմաստը:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել մեդիախոսույթի առանձնահատկությունները և բնութագրիչ հատկանիշները, վերհանել մեդիախոսույթի սուբյեկտիվության լեզվական և արտալեզվական ձևերը, որոնք հատկապես արտահայտված են ներակա մակարդակում, ինչպես նաև հստակեցնել մեդիախոսույթի հեղինակների դերը և նրանց խոսույթային դիրքորոշումը: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսն ուսումնասիրության է ենթարկել մի շարք խնդիրներ, որոնք իրենց համոզիչ լուծումներն են ստացել աշխատանքի եզրահանգումներում:

Աշխատանքի հիմնական վարկածը հիմնվում է լրագրողական լեզվի ներակա արտահայտված սուբյեկտիվության գործոնի վրա: Սկզբունքորեն,

մեդիահաղորդակցությունը պահանջում է փաստերի և իրադարձությունների օբյեկտիվ ներկայացում, սակայն ատենախոսը, աշխատանքում դուրս բերելով մեդիահաղորդակցության բոլոր առանձնահատկությունները և հիմնվելով այս խոսույթի ուսումնասիրությամբ զբաղվող տեսաբանների մոտեցումների վրա (Թ.Լանսիենի, Ռ.Կլոս, Պ.Պոնտեն, Կերբրատ-Օրեքշիոնի, Պ.Շարոդո), գալիս է այն եզրահանգման, որ մեդիախոսույթը դասվում է սուբյեկտիվ հաղորդակցության շարքին և, որ «մեդիախոսույթի օբյեկտիվության ապահովումը գրեթե անհնար է»:

Համաձայն ենք նաև սույն հետազոտության հաջորդ վարկածի հետ, որը հիմնվում է այն դրույթի վրա, որ հասարակական-մշակութային արժեքները կարևոր դեր են խաղում մեդիախոսույթում, հետևաբար կարևորվում են մեդիահաղորդակցության, լեզվի և մշակույթի միջև եղած կապերը, որոնց հանագամանալի ուսումնասիրությունն ատենախոսը հաջողությամբ իրականացրել է իր աշխատանքում:

Աննա Մելքոնյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և եզրակացությունից: Ներկայացված գրականության ցանկը ներառում է խոսույթի ուսումնասիրությամբ զբաղվող հայտնի ֆրանսիացի լեզվաբաններ Պ.Շարոդոյի, Դ.Մենգնոյի, Է.Բենվենիստի, Օ.Դյուկրոյի և այլոց աշխատությունները, ինչպես նաև ոլորտի հայ և ռուս լեզվաբանների աշխատություններ: Գրականության ցանկում առկա են նաև առցանց աղբյուրներ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ աշխատանքի երեք գլուխները և ենթագլուխները աչքի են ընկնում իրենց կուտ կառուցվածքով և տրամաբանական փոխկապակցվածությամբ: Ատենախոսին հաջողվել է դուրս բերել մեդիախոսույթի առանձնահատկություններն ու բնութագիչ հատկանիշները՝ հստակեցնելով այս խոսույթի սահմանները՝ այն տարբերակելով գիտական, քաղաքական և այլ տեսակի խոսույթներից: Ատենախոսը մանրագնին ուսումնասիրության է ենթարկել նաև մեդիախոսույթի հեղինակների դերը և նրանց խոսութային դիրքորոշումը, որն էլ հանդիսանում է սույն ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության մեջ առաջ քաշված տեսական դրույթները հիմնավորված են ֆրանսիական մամուլից՝ «Le monde», «Le Figaro», «Libération», «L'Express» հոդվածներով, ինչպես նաև TV5, France 1, F2 հեռուստաալիքներով հեռարձակված հարցազրույցներով և քաղաքական գործիչների ելույթներով: Ատենախոսին հաջողվել է համադրման, հակադրության, բաղադրիչային և համատեքստային, ինչպես նաև հերմենևտիկ մեթոդոդների կիրառմամբ կատարել լեզվաբանական ուշագրավ վերլուծություններ՝ դուրս բերելով հաղորդվող տեղեկատվության խորքային կառույցներում ներակա կանխենթադրույթը:

Այդուհանդերձ, կցանկանայինք կատարել հետևյալ դիտարկումները կատարված աշխատանքի վերաբերյալ.

1. 45-րդ էջում քննվող ասույթը՝ «Տիկին նախարարը բուժքրոջ մոտեցում ցուցաբերեց», որի հեղինակը ֆրանսիացի լրագրող և բնապահպանության հարցերով պատգամավոր Նոել Մամերն է, ներակայում է սուր քննադատություն Ֆրանսիայի Բնապահպանության նախարար Դ. Վուայնեի հասցեին՝ «TOTAL» նավթարդյունաբերական ընկերության կողմից պատճառած բնապահպանական աղետի վնասները լուրջ չգնահատելու համար, որի համար նա լրագրողի կողմից համեմատվել է բուժքրոջ հետ, քանի որ բուժքույրը, ի տարբերություն բժշկի, խնամում է հիվանդին, սակայն չի կարող ախտորոշել նրա հիվանդությունը:

Հատկանշական է, որ քննվող օրինակում ներակա իմաստը կանխենթադրույթ չէ, այլ ներակայվածք է, քանի որ կանխենթադրույթը անհերքելի փաստ, իրողություն է, որը սկզբունքորեն տարբեր ընկալումների տեղիք չի տալիս: Ներակայվածքի ներակա իմաստի ընկալումը միանշանակ չէ և մեկնաբանվում և ընկալվում է որպես այդպիսին միայն համատեքստային, հաղորդակցական իրավիճակի ֆոնային գիտելիքի հիման վրա: Այն գնահատողական է, նպատակային և խիստ իրավիճակային և, ըստ այդմ, կարող է առաջացնել ընկալման տարբերակայնություն:

2. Ատենախոսն իր հետազոտությունում հիմք է ընդունել խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցը: Ցանկալի կլիներ այն լրացնել անգլոամերիկյան տեսաբանների մոտեցումներով, որը միայն կլավարկեր և կհարստացներ հետազոտական հատվածի գիտական բազմաձայնությունն և, ըստ այդմ, հիմնավորվածությունը:
3. Աշխատանքի 38-րդ էջում ատենախոսն օգտագործել է «ավելցուկային» եզրույթը՝ որպես redundance, избыточность եզրույթի թարգմանություն, սակայն լեզվաբանության մեջ դրա ընդունված հայերեն համարժեքը «հավելուրդային» եզրույթն է:
4. Ատենախոսը աշխատանքում օգտագործել է մի շարք օտարալեզու բառեր և եզրույթներ, ինչպես օրինակ, անտագոնիստական, իլլոկուտիվ ուժ, մասսաներ, մեթոդոլոգիա և այլն: Ցանկալի կլիներ կիրառել դրանց հայերեն համարժեքները՝ թշնամական, ներագոդողական ուժ, զանգվածներ, մեթոդաբանություն և այլն:
5. Կարծում ենք, որ եզրակացության 2-րդ կետը ցանկալի կլիներ ներառել եզրակացության նախաբանում, քանի որ այն աշխատանքից բխող եզրակացություն չէ, այլ հենքային գիտելիք:

Նշված դիտարկումները կրում են մասնակի բնույթ, չեն ազդում կատարած հետազոտության գիտական արժեքի վրա և առավելապես ուղղված են հետազայում կատարվելիք ուսումնասիրություններին:

Հեղինակի կողմից կատարված մեծածավալ հետազոտությունը շարադրված է գրագետ, գիտական լեզվով: Այն հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության հիմնադրույթների գերակշիռ մասը պարունակում է որոշակի գիտական նորույթ և հիմնավորված նոր մոտեցումներ: Կարելի է նշել, որ Ա. Մելքոնյանն ամբողջովին կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր կերպով ներկայացնելով թեմային առնչվող տեսական և գործնական նյութը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 6 գիտական հոդվածներում, իսկ աշխատանքում կիրառվող մոտեցումները քննարկվել են ԲՊՀ Ռոմանական լեզուների ամբիոնի նիստերում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ներառում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, դրանց ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Աննա Անդրանիկի Մելքոնյանի՝ «Կանխենթադրույթը ֆրանսալեզու լրագրային խոսույթում» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարանի Լեզվաբանության

և հաղորդակցման տեսության ամբիոնի

դոցենտ, բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հ. Թովմասյանի ստորագրությունը հաստատում էմ

Հրանուշ Ժորայի Թովմասյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի

գիտական քարտուղար՝

Հասմիկ Փիլավջյան

30.11.2022թ.

